# ՎՐԱՍՏԱՆ

«ՑՐԱՍՏԱՆԻ» (ՍԱՔԱՐԹՎԵԼՈ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 19 - 20 (16414) ՇԱԲԱԹ, 12 ՄԱՐՏԻ 2016 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ԲԻԶՆԵՍ

## ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐԸ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԽՐԱԽՈՒՍՈՒՄՆ Է»

*Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին մարտի 4-ին, «Էքսպո Ջորջիա» կենտրոնում, հանդիպում ունեցավ երկրի գործարար շրջանների ներկայացուցիչների հետ:*




Կառավարության ղեկավարը հանդիպմանը ներկայացրեց բարեփոխումների չորս կետից բաղկացած ծրագիրը, որի ուղղություններից մեկը գործարարության խրախուսումն է: «Մենք ցանկանում ենք ձեզ հետ միասին քննարկել հարց, որպեսզի փոքր եւ միջին գործարարության ներգրավումը ռազմավարության մշակման հարցում առավելագույնս լինի: Մոտ ժամանակներում կսկսի գործել նոր կազմավորված գործարարության ֆինանսավորման հիմնադրամը, մեծացվում է «Արտադրի'ր Վրաստանում» ծրագիրը, կիրարկվում են այդ ծրագրի լրացուցիչ բաժինները, այդ թվում՝ «Ընդունի'ր Վրաստանում» նախագիծը, որը խրախուսում է հյուրանոցային հատվածին: Նշանակալից քայլեր են

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎ

## ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑԸ ԲԱՔՈՒ

***Մարտի 10-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, աշխատանքային այցով, գտնվում էր Բաքվում: Գիորգի Մարգվելաշվիլին մասնակցեց «Դեպի բազմաբեւեռ աշխարհ» թեմայով 4-րդ գլոբալ համաժողովին, Ադրբեջանի նախագահի հետ ներկա գտնվեց գիտաժողովի բացմանը եւ հանդես եկավ խոսքով:***



Այցի շրջանակներում, տեղի ունեցավ Գիորգի Մարգվելաշվիլու հանդիպումը Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ:

Հանդիպմանն ընդգծվեց տարբեր ոլորտներում երկու երկրների միջեւ հարաբերությունների զարգացման կարեւորությունը: Առանձնակի ուշադրություն հատկացվեց լայնամասշտաբ նախագծերի իրականացման հարցին:

Նշենք, որ վերջերս պաշտոնական այցով Ադրբեջանում էր գտնվում Վրաստանի արտաքին գործերի նախարար Միխեիլ Ջանելիձեն: Նա այցի շրջանակներում, հանդիպում ունեցավ երկրի նախագահ Իլհամ Ալիեւի, վարչապետ Արթուր Ռասի Զադեի, միլիմեջլիսի նախագահ Օկտայ Ասադովի, ԱԳ նախարար Էլմար Մամեդյարովի հետ:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

## ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻՆ՝ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻՈՒՄ



***Մարտի 5-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, աշխատանքային այցով, գտնվում էր Սամցխե-Ջավախեթիում: Վարչապետը Ախալցիխեում եւ Բորժոմիում մասնակցեց մի շարք միջոցառումների, դիտեց Ախալցիխեից Սափարա մենաստան տանող ճանապարհի վերականգնման աշխատանքները:***

Նշենք, որ Համաշխարհային բանկի աջակցությամբ եւ Վրաստանի կառավարության համաֆինանսավորմամբ, Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանում սկսվել է զբոսաշրջության ներուժի խրախուսման ծրագրի իրականացումը: Այդ ծրագրի շրջանակներում էլ նախատեսված է Ախալցխեից Սափարա մենաստան տանող 7,2 կիլոմետրանոց ճանապարհի հիմնարար վերանորոգումը: Դիտելով աշխատանքների ընթացքը՝ Վրաստանի վարչապետն ընդգծեց ճանապարհի կարեւորությունը: «Այստեղ են գալիս զբոսաշրջիկներ, հավատացյալներ, տարածաշրջանի բնակիչներ եւ բոլորի համար նշանակալից է, որպեսզի այդ ճանապարհը լինի բարվոք ու կարգավորված՝ ենթակառույցների տեսանկյունից»,- հայտարարեց վարչապետը: Նշենք, որ ճանապարհի վերանորոգման համար, որն իրականացնում է մունիցիպալային զարգացման հիմնադրամը՝ Համաշխարհային բանկի համաֆինանսավորմամբ, հատկացվել է 3198099,81 լարի:

Աշխատանքային այցի շրջանակներում, վարչապետը մասնակցեց «Արտադրի'ր Վրաստանում» նախագծի շրջանակներում կազմավորված մի շարք արտադրությունների, ինչպես նաեւ Բորժոմիում նոր հյուրանոցի բացման արարողություններին:

ՎՐԱՍՏԱՆ - ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

## ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԻԶԱՆԵՐԻ ՉԵՂԱՐԿՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ



***Եվրահանձնաժողովն առաջարկել է ԵՄ խորհրդին եւ Եվրախորհրդարանին Վրաստանին ներառել այն երկրների ցանկում, որոնց քաղաքացիները կարող են առանց վիզայի ճամփորդել շենգենյան գոտում: Օրենսդրական նախաձեռնությունը, որը հրապարակվել էր Եվրամիության փաստաթղթերի ռեեստրում, ուժի մեջ կմտնի Եվրախորհրդարանի եւ Եվրամիության անդամ երկրների հաստատումից հետո:***

Ինչպես հայտարարեց եվրահանձնաժողովի ներքին գործերի հարցերով եվրակոմիսար Դիմիտրիս Ավրամոպուլոսը, այն բանից հետո, երբ առաջարկը ընդունվի ԵՄ խորհրդի եւ եվրոխորհրդարանի կողմից, կենսաչափական անձնագրեր ունեցող Վրաստանի քաղաքացիները ստիպված չեն լինի ստանալ վիզա՝ շենգենյան գոտի մինչեւ 90 օրով կատարելիք ուղեւորության ժամանակ: Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, մեկնաբանելով եվրահանձնաժողովի առաջարկությունը, հայտարարեց, որ այցեգրերի ազատականացումը Վրաստանի համար այդ բարդ աշխատանքի ճանաչումն է, որը տարիների ընթացքում կատարել է երկիրը:

Իր հերթին, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին նշեց, որ երկիրը հաջողությամբ հաղթահարեց այցեգրերի ազատականացման առաջին փուլը, թեպետ հարցի վերջնական լուծման քաղաքական գործընթացն առջեւում է: «Բոլորը պետք է գիտակցեն՝ ինչպես մենք արտիվ աշխատեցինք առաջին փուլում, ակտիվորեն կգործենք նաեւ քաղաքական գործընթացի ժամանակ, քանի որ մեր եվրոպական գործընկերների հետ երկխոսությունը այդ գործընթացը կհասցնի վերջնական արդյունքի»,- հայտարարեց Վրաստանի նախագահը:

ՆՈՐ ԱՌԱՐԿԱ

## ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆԸ

***Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին իր աջակցությունը հայտնեց կրթության նախարար Թամար Սանիկիձեին, դպրոցներում «Ես եւ հասարակությունը» նոր առարկայի ընդգրկման հարցում:***

Վարչապետի հավաստմամբ, մանկական տարիներին քաղաքացիների շրջանում պատասխանատվության զգացման դաստիարակությունը դրական երեւույթ է:

«Ցանկանում եմ անդրադառնալ դպրոցներում «Ես եւ հասարակությունը» նոր առարկայի ներդրման հարցին, եւ այդ կապակցությամբ կրթության նախարարի հասցեով իրականացվող հարձակում-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

## ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿՈԱԼԻՑԻԱՆ ՀԱՆԴԵՍ Է ԳԱԼՈՒ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ԿՈՆԿՐԵՏ ՆՊԱՏԱԿԻ ՇՈՒՐՋ

***Մարտի 4-ին, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու նախագահությամբ, անցկացվեց կառավարության հերթական նիստը: Նիստին վարչապետը կառավարության անդամներին տեղեկատվություն հաղորդեց նախորդ օրը Հանրապետական կուսակցության լիդերների հետ կայացած հանդիպման վերաբերյալ:***

Վրաստանի վարչապետ, «Վրացական երազանք» կոալիցիայի լիդեր Գիորգի Կվիրիկաշվիլին նշեց, որ կառավարող ուժը առաջիկա ընտրություններին մասնակցելու է կոալիցիայի ձեւաչափով, եւ այն պետք է համախմբվի կոնկրետ նպատակների շուրջ: «Այդ նպատակներն առաջին հերթին, հիմնվելու են մեր արժեքների եւ ավանդույթների վրա եւ, բնականաբար, լրիվությամբ համապատասխանելու են եվրոպական եւ եվրատլանտյան ապագա Վրաստանի շահերին»,- հայտարարեց վարչապետը:

Անդրադառնալով կոալիցիայի ներսում առկա տարաձայնու-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԲԻԶՆԵՍ

# ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐԸ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԽՐԱԽՈՒՍՈՒՄՆ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ձեռնարկվում ֆինանսավորման մատչելիության ապահովման ուղղությամբ»,- հայտարարեց վարչապետը:

Հանդիպմանը Գիորգի Կվիրիկաշվիլին առաջարկեց հիմնել փոքր եւ միջին գործարարների նախաձեռնողական խումբ, որը կառավարությանը կներկայացնի գործարարների առջեւ ծառացած հիմնախնդիրները:

Վարչապետը նշեց նաեւ, որ գործարար շրջանների ներկայացուցիչների հետ հանդիպումների ձեւաչափը հարկ է փոխել եւ դրանում ընդգրկել փոքր եւ միջին գործարարներին: «Ես խոշոր գործարարության դեմ ոչինչ չունեմ, սակայն անհրաժեշտ է ավելի շատ հանդիպումներ անցկացնել փոքր եւ միջին գործարարների հետ, քանի որ դա այն ուժն է, որը բնութագրվում է առավելագույն դինամիկայով եւ զբաղվածության ամենաբարձր ցուցանիշով»,- հայտարարեց վարչապետը:

# ԿՄԱՐՎԵՆ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՇՈՐ ՊԱՐՏՔԵՐԸ



*Մարտի 10-ին Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրին հանդիպում ունեցավ փոքր եւ միջին ձեռներեցության ասոցիացիայի ներկայացուցիչների հետ:*

Ինչպես հայտարարեց ասոցիացիայի գործադիր նախագահ Միխեիլ Ճելիձեն, առաջիկայում հարկային օրենսգրքում ծրագրված են փոփոխություններ, որոնք հեղափոխական բնույթի են եւ տնտեսական մեծ օգուտ կտան: Նրա խոսքերով, ընկերությունները, որոնք ունեն մեծ պարտքեր, եւ այդ պարտքերը սառեցված են, ու այդ պատճառով չեն աշխատում, պարտքերից կազատվեն, քանի որ այդ գումարները կչեղարկվեն: Դա նախատեսված է հարկային օրենսգրքի փոփոխություններով, որոնք գործարկվելու են հուլիսի 1-ից: Ասոցիացիայի գործադիր նախագահի տեղեկատվությամբ, նորամուծություններ են նախատեսված նաեւ սահմանված արգելքների հարցով: «Եթե ընկերությունը հարկային ծառայությանը ներկայացնի բանկային հաշիվ, որն արգելափակված է, եւ այդ գումարն արդեն սառեցված է, հնարավոր է այդ արգելքը հանվի նաեւ մյուս հաշիվներից»,- հայտարարեց Միխեիլ Ճելիձեն: Իր հերթին, Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրին հայտարարեց, որ եթե գործարարները ներկայացնեն հիմնավորված փաստարկներ, ապա լրացուցիչ հիմնախնդիրների կանխման համար բացառված չէ, որ փոփոխությունները կիրարկվեն հաջորդ տարվանից:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

# ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿՈԱԼԻՑԻԱՆ ՀԱՆԴԵՍ Է ԳԱԼՈՒ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ԿՈՆԿՐԵՏ ՆՊԱՏԱԿԻ ՇՈՒՐՋ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

թյուններին՝ վարչապետը նշեց. «Եթե կոալիցիայում կան տարաձայնություններ, եւ նա հանդուրժում է տարաձայնությունները, ապա մեզ մոտ կառավարությունում կան կարեւորագույն նպատակներ, կարեւորագույն խնդիրներ, որոնք մենք պարտավոր ենք լուծել եւ կառավարության միասնությունը պետք է լինի շատ ավելի բարձր: Ուստի գտնում եմ, որ առավելագույնս կենտրոնանալու ենք այդ նպատակների շուրջ, որոնք մեր բնակչության, մեր երկրի համար հրատապ նշանակություն ունեն, եւ մենք պետք է միասնական լինենք այդ նպատակների հարցում»,- հայտարարեց Գիորգի Կվիրիկաշվիլին:

Խոսելով Հանրապետական կուսակցության լիդերների հետ հանդիպման մանրամասների մասին՝ Գիորգի Կվիրիկաշվիլին նշեց, որ «Վրացական երազանքը» նշանակալիորեն կնորացվի: «Մենք քննարկեցինք «Վրացական երազանքի» եւ Հանրապետական կուսակցության գործընկերության կարեւորությունը: Բնականաբար, նախընտրական փուլում կվերացվեն առանձին համաձայնություններ: Սակայն, կոալիցիան բազմակուսակցական լինելով, երկու կարգով կնքված համաձայնությունը հետագայում կհաստատվի բազմակողմ ձեւաչափով»,- ընդգծեց վարչապետը:

Նշենք, որ Գիորգի Կվիրիկաշվիլու եւ Հանրապետական կուսակցության լիդերների հանդիպումից հետո, այդ կուսակցության ղեկավարներից Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին հայտարարեց, որ Հանրապետական կուսակցությունը ռազմավարական գործընկերության ռեժիմում է մնում «Վրացական երազանք» կոալիցիայի հետ: Նրա խոսքերով, այդ ձեւաչափով էլ համատեղ կմոտենան ընտրություններին, ինչը նախատեսում է կոալիցիայի հետ սերտ համագործակցություն:

ՆՈՐ ԱՌԱՐԿԱ

# ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ներին ու շահարկումներին: Մի քանի օր առաջ մենք կառավարությունում քննարկեցինք այդ հարցը: Առաջադրվեցին հարցեր եւ բոլորին տրվեցին սպառիչ պատասխաններ: Հրապարակավ հայտարարում եմ, որ վաղ տարիքից պատասխանատվության զգացման դաստիարակությունը դրական երեւույթ եմ համարում»,- հայտարարեց վարչապետը:

Գիորգի Կվիրիկաշվիլին այդ կապակցությամբ անդրադարձավ ուսուցիչների նախապատրաստման անհրաժեշտության հարցին: «Կառավարության անունից ցանկանում եմ լրիվ աջակցություն հայտնել կրթության նախարարին, նաեւ ցանկանում եմ կոչ անել, որպեսզի նրա գլխավորած գերատեսչության դռները միշտ բաց լինեն ցանկացած երկխոսության համար»,- նշեց վարչապետը:

ԿՐԹԱԿԱՆ

# ԹԱՄԱՐ ՍԱՆԻԿԻՁԵ. «ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԳՈՀԱՑՈՒՑԻՉ ՉԵՆ»

***Ինչպես հայտարարեց Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Թամար Սանիկիձեն, հանրային դպրոցների ուսուցիչների մասնագիտական քննությունների արդյունքները մտահոգիչ են, սակայն՝ ոչ աղետալի:***

Նախարարը այսպես արձագանքեց այն տեղեկատվությանը, ըստ որի, քննություններին մասնակից ուսուցիչների 85 տոկոսը չի կարողացել հաղթահարել արգելագիծը: Տարածված տեղեկատվության համաձայն, քննությունների համար գրանցվել էր 10552 գործող ուսուցիչ, որից 6477-ը մասնակցեց թեստավորմանը, սակայն 60 տոկոս կազմող իմացության նվազագույն մակարդակը կազմող արգելագիծը կարողացավ հաղթահարել ընդամենը 1101-ը, այսինքն՝ 17 տոկոսը: Նախնական տվյալներով, ցածր արդյունքներ է առանձնակի գրանցվել տարրական դասարանների ուսուցիչների մոտ: Մասնավորապես, թեստավորմանը մասնակից 1167 ուսուցչից իրենց մասնագիտական որակավորումը ապացուցել է միայն 94-ը, այսինքն՝ 8 տոկոսը: 381 մաթեմատիկայի ուսուցիչներից արգելագիծը հաղթահարել են 26-ը (7 տոկոս), վրաց լեզվի եւ գրականության 317 ուսուցիչներից 15 տոկոսն է միայն հաջող հանձնել քննությունը: Նմանօրինակ իրավիճակ է գրանցվել նաեւ ֆիզիկայի, քիմիայի եւ մյուս առարկաների ուղղությամբ:

Նշենք, որ առարկայական քննությունների միջեւ մասնակիցների ամենամեծ տոկոսը գրանցել է ռուսաց լեզուն՝ 55 տոկոս:

Մեկնաբանելով արդյունքները՝ Թամար Սանիկիձեն նշեց. «Արդյունքները գոհացուցիչ չեն, սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հիմնախնդիրը շատ տարիների պատմություն ունի, այլ արդյունքներ չէինք կարող սպասել: Պետությունը փոխեց ողջ համակարգը, ստեղծվեց նոր համակարգ, ըստ որի, բոլոր ուսուցիչներին կտրվի անհրաժեշտ



նախապատրաստություն անցնելու հավասար իրավունք: Համակարգը սկսել է գործել 2015 թվականի սեպտեմբերից, եւ առաջին թեստավորումն անցկացվեց 2016-ի ձմռանը: Պետք է իմանալ, որ ուսուցիչները քննությունը կարող են հանձնել եւս երեք տարվա ընթացքում, նաեւ նախապատրաստությունից հետո, որը կանցկացվի տարեկան երկու անգամ»,- հայտարարեց Թամար Սանիկիձեն եւ հավելեց, որ բավականին մեծ է այն ուսուցիչների թիվը, ում արգելագծի հաղթահարման համար չէր բավարարել կես կամ մեկ միավոր:

***ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ***



ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

## ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՐԿԱՐԱՑՎՈՒՄ ԵՆ

*Եվրամիությունը մարտի 10-ին պաշտոնապես հաստատել է Ռուսաստանի եւ Ուկրաինայի արեւելքի ինքնահռչակ հանրապետությունների քաղաքացիների համար կազմված սեւ ցուցակի գործողությունը կես տարով երկարացնելու որոշումը:*

*«2016 թվականի մարտի 10-ին Խորհուրդը վեց ամսով երկարացրեց ԵՄ-ի սահմանափակիչ միջոցները 146 մարդու եւ 37 ընկերությունների նկատմամբ՝ կապված Ուկրաինայի տարածքային ամբողջականության, ինքնիշխանության եւ անկախության շարունակվող խախտման ու սպառնալիքի հետ»,- նշվում է փաստաթղթում:*

ԱՄՆ

## ՄՐՑԱՐՇԱՎԸ ԳԼԽԱՎՈՐՈՒՄ ԵՆ ՀԻԼԱՐԻ ՔԼԻՆԹՈՆԸ ԵՎ ԴՈՆԱԼԴ ԹՐԱՄՓԸ

*ԱՄՆ-ի նախկին առաջին տիկին եւ պետքարտուղար, դեմոկրատ Հիլարի Քլինթոնը եւ հանրապետական միլիարդատեր Դոնալդ Թրամփն է՛լ ավելի են ամրապնդել իրենց դիրքերը ԱՄՆ-ի նախագահական մրցարշավում: Նրանք երկուսն էլ քվեատուների ձայների թվաքանակով մեծացրել են իրենց առավելությունը մրցակիցների նկատմամբ:*

*Քլինթոնը իր միակ մրցակիցը համարում էր Վերմոնտի նահանգից սենատոր Բեռնի Սանդերսին: Քվեատուների ձայների առավելությունը Քլինթոնի կողմում է, Դեմոկրատական կուսակցությունում քվեարկության արդյունքներով մանդատների համամասնական բաշխման գործող համակարգի պատճառով:*

*Թրամփը, իր հերթին, անվերապահ հաղթանակ է տարել Միսսիսիպիում եւ Միչիգանում՝՝ դրանով իսկ ցուցադրելով անխոցելիությունը քարոզչական այն գրոհի ֆոնին, որը վերջին օրերին նրա դեմ ծավալվել է Հանրապետական կուսակցության վերնախավի եւ նրա առավել պահպանողական թեւի կողմից:*

ՍԻՐԻԱ

## ԱԼՅԱՆՍԸ ՍԱՏԱՐՈՒՄ Է ՀՐԱԴԱԴԱՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆԸ

*ՆԱՏՕ-ն ամբողջությամբ սատարում է Սիրիայում հաստատված հրադադարը, որը պահպանում է ճգնաժամը հաղթահարելու լավագույն ճանապարհը: Այս մասին, Եվրահանձնաժողովի ղեկավար Ժան-Կլոդ Յունկերի հետ հանդիպմանը, հայտարարել է ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգը:*

*«Սիրիայում հաստատված հրադադարը, որը հիմնականում պահպանվում է, ճգնաժամը հաղթահարելու լավագույն ճանապարհն է: ՆԱՏՕ-ն ամբողջությամբ սատարում է հրադադարի հաստատմանն ու այն ջանքերին, որոնք արվում են քաղաքական բանակցությունների անցկացման համար»,- ասել է նա:*

ԻՐԱՆ

## ՓՈՐՁԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԲԱԼԻՍՏԻԿ ՀՐԹԻՌՆԵՐ

*Իրանը երկու բալիստիկ հրթիռի փորձարկում է անցկացրել: Փորձարկումներն իրականացվել են երկրի պաշտպանական դոկտրինայի շրջանակներում:*

*Բալիստիկ հրթիռներ էին արձակվել Իրանի տարբեր տարածաշրջաններում գտնվող հանքահորերից:*

*Իրանական մամուլը գրել է, որ այդ արձակումները պետք է ցուցադրեն, որ Իրանը միշտ պատրաստ է դիմագրավել իր ինքնիշխանության դեմ ուղղված սպառնալիքները:*

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ



## ԿԱՅԱՑԱՎ ԲԱԲՈՒՇԵՐԱՅԻ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻ ԱՃՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒՄԸ

***Մարտի 5-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, պաշտպանության նախարար Թինա Խիդաշելին, երկրի գործադիր եւ օրենսդիր մարմինների ներկայացուցիչների հետ միասին, Թբիլիսիի Սուրբ Երրորդության տաճարում մասնակցեցին Սուխումիի Բաբուշերայի օդանավակայանում ինքնաթիռի աղետի արդյունքում զոհված 10 ռազմիկների հոգեհանգստի արարողությանը:***

«Այս երիտասարդները, ում տասնամյակներ հետո մենք կրկին հարգանքի տուրք ենք մատուցում, իրենց կյանքը նվիրեցին երկրի անկախության համար պայքարին: Մեր պարտքն է, կառուցել այնպիսի երկիր, որի մասին նրանք երազում էին, եւ որի համար զոհաբերեցին իրենց կյանքը»,- հայտարարեց Գիորգի Մարգվելաշվիլին:

Նշենք, որ վերջերս ավարտվեց Աբխազիայից տեղափոխված աճյունների նույնականացումը, եւ մարտի 5-ին նրանք զինվորական պատվով հողին հանձնվեցին Դիդոմիի եղբայրական գերեզմանատանը:

ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

## ԿԱԽԻ ԿԱԼԱՁԵ. «ԳԱԶՊՐՈՄԻ» ՀԵՏ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ԿՍՏՈՐԱԳՐՎԻ ՄՈՏ ՕՐԵՐՍ»

***Վրաստանի փոխվարչապետ, էներգետիկայի նախարար Կախի Կալաձեն խորհրդարանի կոմիտեական լսումներում հայտարարեց, որ մոտ ժամանակներում կստորագրվի «Գազպրոմի» հետ համաձայնագիրը:***



Նրա խոսքերով, այդ հարցում բանավոր պայմանավորվածության են հասել, ըստ որի, մատակարարման պայմանները մնում են նույնը եւ Վրաստանը ստանում է Հայաստան տարանցվող բնական գազի 10 տոկոսը: «Վերջին ամիսներին գազամատակարարման թեման շատ հրատապ էր: Էներգետիկայի նախարարությունը տարբեր ուղղություններով բանակցություններ էր վարում, որպեսզի երկիրը ապահովվի բնական գազով եւ այսօր պահանջարկը բավարարվում է: Անցյալ շաբաթ կարեւոր համաձայնագիր ստորագրվեց «Սոկար» ընկերության հետ»,- հայտարարեց Կալաձեն: Անդրադառնալով գազիֆիկացման թեմային՝ էներգետիկայի նախարարը նշեց, որ 2017 թվականի համար երկրի բոլոր տարածաշրջաններում գազիֆիկացումը կավարտվի: «Այդ ուղղությամբ մենք ակտիվորեն աշխատում ենք կարգավորող հանձնաժողովի հետ: Մեզ հաջողվեց սպառողների ցանցի միացման համար պահանջվելիք 600 լարին նվազեցնել մինչեւ 400 լարի, նաեւ առաջարկվում է երկարաժամկետ, առանց տոկոսի վճարում: Բնակիչներին տրվում է ամսական 25 լարի՝ մուծելով պարտքը մարելու հնարավորություն»,- նշեց Կախի Կալաձեն:

ՎՐԱՍՏԱՆ-ՌՈՒՍԱՍՏԱՆ

## ՄՈՏ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՉԻ ԲԱՑԱՌՎՈՒՄ ԱՅՑԵԳՐԵՐԻ ՉԵՂԱՐԿՈՒՄԸ

***Վրաստանի վարչապետի՝ Ռուսաստանի հետ հարաբերությունների կարգավորման հարցերով հատուկ ներկայացուցիչ Զուրաբ Աբաշիձեն չի բացառում, որ արդեն 2016 թվականին կվերացվի այցեգրային ռեժիմը երկու երկրների միջեւ:***

Մարտի 16-ին, Պրահայում ՌԴ ԱԳ փոխնախարար Գրիգորի Կարասինի հետ պլանավորված հանդիպումից առաջ, Աբաշիձեն հայտարարեց, որ ռուսաստանցի իր գործընկերոջ հետ քննարկելու է արդեն երկու ամիս գործող դյուրացված այցեգրային ռեժիմի մանրամասները:

«Մենք կքննարկենք՝ ինչպես է գործում այցեգրային ռեժիմը, կա՞ն արդյոք խնդիրներ մեր կողմից եւ մեզ հարկավո՞ր է, արդյոք, ինչ-որ բան անել այդ ուղղությամբ: Այցեգրային ռեժիմը, իրոք զգալիորեն պարզեցվել է, եւ մենք չենք բացառում, որ այս տարի այն ընդհանրապես կհանվի»,- ասել է Աբաշիձեն:

Նրա խոսքով, օրակարգում կլինեն նաեւ առեւտրատնտեսական, տրանսպորտային եւ հումանիտար հարցեր:

ՎՐԱՍՏԱՆ-ՆԱՏՕ

## ԱԼՅԱՆՍԻ ՎԱՐԺԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ ԿՍԿՍԻ ԳՈՐԾԵԼ ՄԱՅԻՍԻՑ



***Վրաստանի պաշտպանության նախարար Թինա Խիդաշելին Վրաստանում հավատարմագրված՝ ՆԱՏՕ-ի երկրների դեսպանների հետ հանդիպմանը հայտարարեց, որ Թբիլիսիի մերձակա Կրծանիսիում տեղակայված ՆԱՏՕ-ի ուսումնավարժական կենտրոնը մայիսին կընդունի դաշինքի անդամ եւ գործընկեր երկրների զինվորականներից բաղկացած առաջին զորակազմը:***

«Վարժական ու գնահատիչ կենտրոնը մայիսին կընդունի առաջին զորակազմը: Այսօրվա հանդիպման անհրաժեշտությունը պայմանավորված էր հենց այդ հանգամանքով: Դեսպանների հետ մենք քննարկեցինք բոլոր այն մանրամասները, որոնք անհրաժեշտ են առաջին վարժանքների անցկացման համար»,- ընդգծեց Թինա Խիդաշելին:

Կրծանիսիի Ազգային ուսումնական կենտրոնի տարածքում ՆԱՏՕ-ի ուսումնավարժական կենտրոնը բացվել էր անցյալ տարվա օգոստոսին: Կենտրոնի բացումը տեղի է ունեցել այն միջոցառումների փաթեթի շրջանակներում, որոնք աջակցում են դաշինքին անդամակցելու Վրաստանի ձգտմանը: Այն հաստատվել է 2014 թվականի սեպտեմբերին դաշինքի՝ Ուելսում կայացած գագաթաժողովի ընթացքում: Կենտրոնում պատրաստություն են անցնելու ՆԱՏՕ-ի անդամ ու գործընկեր երկրների զինծառայողները:

ԱԴԻԳԵՆԻԻ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ՝ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ՈՒ ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

***Արդեն հաղորդել ենք, որ Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանի Ադիգենիի մունիցիպալիտետում, տեղացի քրիստոնյա եւ վրացի մուսուլման բնակիչների միջեւ տեղի ունեցավ ընդհարում, որի արդյունքում տուժել էր մի քանի մարդ:***

Տարածաշրջան Աջարիայից վերաբնակեցված մահմեդականների եւ տեղացի քրիստոնյաների միջեւ խնդիրը ծագել էր այն բանից հետո, երբ կրոնական գործերով Պետգործակալությունը մուսուլմաններին թույլատրել էր առանձին գերեզմանոց հիմնել: Մինչ այդ, ուղղափառ քրիստոնյաներին եւ մուսուլմաններին հուղարկավորում էին մի գերեզմանոցում:

Որոշումը բողոք էր առաջացրել քրիստոնյաների մոտ: Նրանց հայտարարությամբ, գերեզմանոցից հետո մուսուլմանները մտադիր են պահանջել մզկիթի շինարարություն, իսկ հետո կարող են ընդհանրապես պահանջել Ադիգենիից վտարել քրիստոնյաներին, քանի որ շրջկենտրոնում վերջին տարիների ընթացքում քրիստոնյա ընտանիքներում ծնված մեկ երեխային մուսուլման ընտանիքում ծնված երեք երեխա է ընկնում:

Հարցի կարգավորման համար, Վրաստանի կրոնական գործերով պետգործակալության ներկայացուցիչները այցելեցին Ադիգենի՝ հանդիպելու տեղացի բնակիչներին: Կայացած հանդիպումների արդյունքում, ձեռք է բերվել փոխզիջում: Որոշում է ընդունվել բացել քրիստոնյաների ու մուսուլմանների համար ընդհանուր գերեզմանատուն:



### ԵՐԿՈՒ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ՊԱՇՏՈՆԱԹՈՂ ԵՂԱՎ

*Մարտի 10-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին բավարարեց Մցխեթա-Մթիանեթիի եւ Շիդա Քարթլիի նահանգապետեր Նուգզար Դիփիանու եւ Զուրաբ Ռուսիշվիլու պաշտոնաթողության մասին դիմումները:*

*Մցխեթա-Մթիանեթիում պետական լիազորի պաշտոնը կզբաղեցնի Գոչա Ջեյկիձեն, իսկ Շիդա Քարթլիում նահանգապետի ժամանակավոր պաշտոնակատարը կդառնա փոխնահանգապետը:*

### ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՈՒՊՏՎԱԽՏԸ ՎԵՐԱՑՎՈ՞ՒՄ Է

*Վրաստանի պաշտպանության նախարարությունը տարածել է տեղեկատվություն, ըստ որի, երկրի զինված ուժերում հաուպտվախտը վերացվում է. Օրենսդրական համապատասխան փոփոխություններով փաթեթը հաստատման համար ներկայացվել է կառավարությանը:*

*Ինչպես նշեցին պաշտպանության նախարարությունում, փոփոխությունների հանգուցային խնդիրներից մեկը առկա թերացումների վերացումն է: Դրանցից մեկը վերաբերում է հաուպտվախտում զինծառայողների պատժմանը, ինչը մարդու իրավունքների կոպիտ խախտում է:*

### ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

*Մարտի 10-ին, Թբիլիսիի պետական համալսարանում, ԹՊՀ-ի կանցլերի ընտրության համար գումարված սենատի նիստն անցկացվեց սուր դիմակայության պայմաններում: Ուսանողները նիստին կարողացան ներկա գտնվել միայն կարգուկանոնը պահպանող ոստիկանների հետ ընդհարումներից հետո: Ուսանողները պահանջում են կանցլերի թեկնածուների ցուցակից հանել Գիորգի Գափրինդաշվիլու թեկնածությունը: Ուսանողների հավաստմամբ, մինչ այդ, համալսարանի վարչակազմում աշխատող Գիորգի Գափրինդաշվիլին հովանավորում էր ուսանողների նկատմամբ բռնի վերաբերմունք ցուցադրող անձանց:*

### ՊԱՏԺՎԵԼ ԵՆ «ԻՊ»-Ի ՀԵՏ ԿԱՊԻ ՀԱՄԱՐ

*Թբիլիսիի քաղաքային դատարանը Վրաստանի չորս բնակչի դատապարտել է 1, 10, 11 եւ 14 տարվա բանտարկության՝ «Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորման հետ կապերի համար:*

*Պանկիսի կիրճի բնակիչ Այուֆա Բորչաշվիլին մեղադրվել է ահաբեկչական կազմակերպության անդամների հավաքագրման եւ արտասահմանյան ահաբեկչական խմբավորման հետ գործակցության հոդվածներով: Դատարանը նրան դատապարտել է 14 տարվա ազատազրկման:*

*Մյուս երկու դատապարտյալները՝ Գիորգի Խուբուլաշվիլին եւ Դավիթ Պիրիսեբիան, ստացել են համապատասխանաբար՝ 11 եւ 10 տարվա բանտարկության պատիժ: Չորրորդ դատապարտյալը՝ Գիորգի Կուպրեևան, խոստովանել է իր մեղքը եւ դատապարտվել մեկ տարվա բանտարկության:*

ՕՐԻՆԱՆԱԽԱԳԻԾ

# ԹԵԱ ԾՈՒԼՈՒԿԻԱՆԻ. «ՄԱՍՆԱՎՈՐ ԱՆՁԱՆՑ ՀՈՂԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԿԽՐԱԽՈՒՍՎԻ ՈՒ ԿԴՅՈՒՐԱՑՎԻ»

*Կառավարության նախաձեռնությամբ, փոփոխություն է կատարվելու հողերի գրանցման մասին օրենքում, միաժամանակ մշակվում է հողերի չափման միասնական չափորոշիչը:*



Վրաստանի կառավարությունը, հաշվի առնելով հողերի գրանցման հետ կապված բարդությունների կապակցությամբ բնակչության մտահոգությունը, մշակել է նոր օրինանախագիծ, ըստ որի, այդ ընթացակարգը բավականին դյուրացվում է եւ նյութական առումով մատչելի դառնում բնակչության համար: Ընթացակարգի բարդությունը պայմանավորված է ոչ միայն սակագնի մեծությամբ, այլեւ հողերի չափման հետ կապված հիմնախնդիրներով: Վերոնշյալը հաստատում է նաեւ երկրի արդարադատության նախարարությունը: Մասնավորապես, արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին առանձնակի ընդգծեց չափման ընթացակարգը որոշակի կարգավորումների շրջանակներում ներառելու անհրաժեշտությունը: Նախարարի հայտարարությամբ, ավարտին է մոտենում օրենսդրական փաթեթի շուրջ աշխատանքը, որը քաղաքացիներին հնարավորություն կընձեռի դյուրությամբ գրանցել հողատարածքը, որը, մինչ այդ, փաստաթղթերի անբավարարության, թերացումների, թեկուզեւ՝ սակագնի պատճառով, չէր իրականացվում: «Դա կլինի համալիր նախագիծ, որը մասնավոր անձանց կխրախուսի հողերի գրանցման եւ դրա մատչելիության, դյուրացման հարցում: Դրա գլխավոր բաղադրիչներից մեկը չափումների նախագծի ստույգ իրականացումն է»,- հայտարարեց Թեա Ծուլուկիանին:

Քանի որ հողերի չափման միասնական չափորոշիչ գոյություն չունի, չափումներն անցկացվում են տարբեր սարքավորումներով: Երբեմն նույնիսկ, տարածքների լուսանկարումը իրականացվում է հեռախոսով, որն անընդունելի է: Վրաստանում գործող օրենսդրությամբ, չեն սահմանվել չափման միասնական չափորոշիչներ, եւ դրա նկատմամբ պետական վերահսկողության իրավական հիմունքները:

Ընդհանուր առմամբ, ներկա դրությամբ, Վրաստանում չափումներն իրականացվում են 300-ից ավելի տեսակներով, որոնց իրականացումը տարբերվում է նաեւ սակագնի առումով: Ինչպես նշեց Թեա Ծուլուկիանին, չափումների առանձին տարբերակներով սակագինը կազմում է 20 լարի, իսկ որոշ համակարգերի օգտագործմամբ, այդ նշանագիծը հասցվում է 500-ի:

Օրինանախագծի սկզբնական տարբերակը, մասնագետի գնահատմամբ, հեռու է իրատեսությունից: Մասնավորապես, Վրաստանի էկոնոմիկայի նախարար Դմիտրի Քումսիշվիլին հայտարարեց, որ նման նախագիծը անհեռանկարային է: «Նման օրինանախագծի քննարկումը անհեռանկարային է: Պետք է ներկայացվի այնպիսի նախագիծ, որը կընդգծի այն փաստը, որ մենք մասնավոր հատվածի պաշտպաններն ենք եւ հողերի գրանցման կողմնակիցները»,- հայտարարեց Քումսիշվիլին:

Հիշեցնենք, որ 2010-2012 թվականներին, երբ ակտիվորեն անցկացվում էր հողերի սեփականաշնորհում, բնակիչները կարողացան սեփականաշնորհել շուրջ 19 հազար հեկտար հողատարածք: Նշենք, որ նման մեծության հողատարածքների գրանցում երկրում երբեք չէր վավերացվել: Հետեւաբար, եթե պետությունը բարի կամք դրսեւորի եւ բնակիչների համար արտոնություններ սահմանի կամ լրիվությամբ վերացնի հարկն ու սեփականաշնորհումը իրականացնի անվճար, բացառված չէ, որ շուրջ կես միլիոն հեկտար հողատարածք անցնի մասնավոր սեփականության տակ: Վրաստանի խորհրդարանի իրավաբանական հարցերով կոմիտեի նախագահի Վախթանգ Խմալաձեի հայտարարությամբ, հողերի գրանցման հարցին առնչվող կառավարության օրինանախագիծը մշակման փուլում է, եւ այն մոտ օրերս կներկայացվի խորհրդարանի քննարկմանը:

«Հողերի գրանցման հարցը վերաբերում է այն հիմնախնդիրների շարքին, որոնք առնչվում են սխալ գրանցված հողերի, ճշգրտված եւ չճշգրտված հողատարածքների սահմանների հարցերին: Օրինանախագիծը պատասխանում է, թե ինչ պետք է արվի այդ ուղղությամբ, եւ ինչպես է իրականացվելու վերոնշյալ հիմնախնդրի կարգավորումը»,- ընդգծեց Վախթանգ Խմալաձեն:

Ավելացնենք, որ անշարժ գույքի, այդ թվում՝ հողերի գրանցման հարցի կապակցությամբ, «Հանրային ռեեստրի մասին» օրենքում փոփոխությունների նախագիծ է ներկայացրել նաեւ «Միասնական ազգային շարժումը»: Նմանօրինակ նախաձեռնությամբ հանդես է եկել նաեւ «Քաղաքական նոր կենտրոն՝ «Գիրչան»:

***ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ***

ՖԻՆԱՆՍՆԵՐ

# ՄԻԿՐՈՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒԿԱՆ ԱԿՏԻՎՈՐԵՆ ԶԱՐԳԱՆՈՒՄ Է

*Վերջին ժամանակներում նկատվում է Վրաստանում միկրոֆինանսական կազմակերպությունների ակտիվ զարգացում: Ընթացիկ տարվա առաջին կիսամյակի տվյալներով, այդ հատվածի եկամուտները գրեթե կրկնապատկվել են:*

Օրինաչափ հարց է ծագում. որքանո՞վ է դա ազդում երկրի էկոնոմիկայի իրատեսական ֆինանսավորման, նոր ձեռնարկությունների ստեղծման եւ նոր աշխատատեղերի բացման վրա:

Միկրոֆինանսական կազմակերպությունները հիմնականում սպասարկում են ռիսկի բարձր մակարդակով դիմորդներին, նրանց, ում բանկերը մերժել են վարկեր տրամադրելուց: Հետեւաբար, այդ կազմակերպությունների գործունեության արդյունքում, դիմորդները ստանձնում են վարկային անհամատեղելի ծանրաբեռնվածություն: Ընդ որում, միկրոֆինանսական կազմակերպությունները, իրենց հերթին, վարկեր են վերցնում բանկերից, ապա վերավարկավորում շատ ավելի բարձր տոկոսներով: Ավելին, շատ հաճախ անմիջականորեն բանկերը կամ բանկերի կառավարիչներն են հանդիսանում միկրոֆինանսական կազմակերպությունների եւ գրավատների սեփականատերերը, թեպետ իրավաբանորեն ամեն ինչ ձեւակերպվում է այնպես, որ սեփականատիրոջ անուն-ազգանունը չի վավերացվում: Բացառված չէ, որ այդ պատաճառով էլ միկրոֆինանսական կազմակերպությունները Վրաստանում վերածվել են ֆինանսավորման խոշորագույն աղբյուրի:

Սխեման ավելի քան պարզունակ է. բանկերը ձգձգումներով են վարկ տրամադրում բիզնես-ընկերություններին, հետեւաբար, նրանք ստիպված են լինում դիմել միկրոֆինանսական կազմակերպություններին, որոնք վարկերը տրամադրում են առանց որեւէ հիմնախնդրի, թեպետ՝ բարձր տոկոսադրույքով: Իրենց հերթին, միկրոֆինանսական կազմակերպությունները շատ ավելի ցածր տոկոսադրույքով վարկեր են ստանում բանկերից:

Վրացական բանկերը միջազգային շուկայում վարկերը ստանում են 5-7 տոկոսով, իրենց հերթին, այն դիմորդներին, այդ թվում՝ միկրոֆինանսական կազմակերպություններին, տրամադրում 12-18 տոկոսով: Միկրոֆինանսական կազմակերպությունները վարկերը տրամադրում են տարեկան 24-36 տոկոսով: Այս պարզունակ սխեմայի արդյունքում, վրացական բիզնեսի գործունեության համար հիմնախնդիրներն աճում են, թեպետ միկրոֆինանսական հատվածը ստանում է պատկառելի եկամուտ, ինչը ոչ մի ազդեցություն չի գործում տնտեսական առաջընթացի վրա:

Բնականաբար, վերոնշյալ սխեման օրենքով արգելված չէ, այն անգամ չի վերահսկվում կարգավորիչ մարմինների կողմից: Վիճակագրական տվյալներով, բանկերը գերադասում են ֆինանսավորել միջնորդներին՝ հանձինս միկրոֆինանսական կազմակերպությունների եւ ոչ թե էկոնոմիկայի հատվածներին:

Ինչպես նշեց միկրոֆինանսական կազմակերպությունների ասոցիացիայի ղեկավար Արչիլ Բակուրաձեն, հիմնախնդիրն այն է, որ բնակչությունը նման կազմակերպությունների թվին դասում է բոլոր ֆինանսական ընկերությունները, որոնք որպես բանկ ձեւակերպված չեն: «Վրաստանում, բանկերից բացի, գործում է առնվազն երկու տեսակի կազմակերպություն, որ վարկեր է տրամադրում: Առաջինը իրական միկրոֆինանսական կազմակերպություններն են եւ երկրորդը՝ սպառողական վարկավորմամբ (գրավատների) կազմակերպությունը: Իրական միկրոֆինանսական կազմակերպությունները ֆինանսավորում են էկոնոմիկան եւ դրանց դիմորդների նշանակալից մասը փոքր եւ միջին գործարարության ներկայացուցիչներն են: Սպառողական վարկավորմանը բաժին է ընկնում միկրոֆինանսական կազմակերպությունների համար հատկացվող գումարների աննշան մասը: Օրինակ, 2015 թվականի հուլիսի տվյալներով, միկրոֆինանսական կազմակերպությունների կողմից գյուղատնտեսությանը տրվել է 111 հազար վարկ, ինչը այդ կազմակերպության կողմից էկոնոմիկայի ցուցաբերվող աջակցության վկայությունն է: Նույնը կարելի է ասել նաեւ առեւտրի, սպասարկումների եւ էկոնոմիկայի մյուս ոլորտների մասին»,- հայտարարեց նա:

«Մեր ասոցիացիայի բոլոր անդամներն անկախ ընկերություններ են, եւ ոչ մեկը կապված չէ որեւէ բանկի հետ, եւ նրանցից ոչ մի ֆինանսավորում չի ստանում: Բացի այդ, միկրոֆինանսական կազմակերպությունները լուրջ մոտեցում են ցուցաբերում վարկավորման ժամանակ, ուսումնասիրում դիմորդի եկամուտներն ու վճարողունակությունը: Եվ դա, ի տարբերություն սպառողական վարկավորման ընկերությունների, որոնք բացարձակապես ոչ մի ուշադրություն չեն դարձնում այդ հարցերի վրա: Նրանց համար նշանակալիցն այն է, որ դիմորդն ունենա շարժական կամ անշարժ գույք, որը, անհրաժեշտության դեպքում, հնարավոր կլինի վաճառել: Հենց նման կազմակերպություններին են դիմում այն անձինք, ովքեր ձգտում են մի վարկի հաշվին մարել մյուսը, հիմնականում՝ բանկային վարկը: Բնականաբար, նման դեպքերում, տոկոսադրույքը բարձրանում է»,- հայտարարեց Արչիլ Բակուրաձեն եւ հավելեց, որ միկրոֆինանսական կազմարերպություններում շրջանառվող ընդհանուր գումարի միայն 23 տոկոսն է ստացվում բանկերից:

***ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ***

# 100 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ՝ ՎԱՐԿ 25 ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ



Եվրոպայի ներդրումային բանկը, 25 տարի ժամկետով, Վրաստանին հատկացնում է 100 միլիոն եվրոյի վարկ: Միջոցները նախատեսված են ենթակառուցային նախագծերի իրականացման համար:

Վրաստանի կառավարության եւ «Վրաստանի քաղաքաշինության վերակառուցմուն ու զարգացում» բանկի միջեւ համապատասխան պայմանագիրը գործադիրը ներկայացրել է երկրի օրենսդիր մարմնի հաստատմանը:

Ինչպես հայտարարեց Վրաստանի ֆինանսների փոխնախարար Գիորգի Կակաուրիձեն, այդ գումարի մի մասը՝ 50 միլիոն եվրոն, կծախսվի ողջ երկրի մասշտաբով ենթակառույցային խոշոր նախագծերի իրականացման համար, 25 միլիոնը նախատեսված է զբոսաշրջության ենթակառույցների ստեղծման, իսկ մնացած՝ 25 միլիոն եվրոն, տարբեր մունիցիպալիտետներում ենթակառույցային փոքր նախագծերի իրականացման համար:

Ֆինանսների փոխնախարարի խոսքերով, վարկը փոխանցվելու է աստիճանաբար: